

ԳՐԱԾԱՌԱՅՈՒԹԵՐ

Ա. գումանի, արօրի եւ հերկելու վերաքերեալ:

Անոռք— 1. փինչ, որ գումանի վարած հողը շրջող տախտակը և գումանի իշոյ ոտը հաստատում է իրար վրայ։ 2. սորա նման փնչեր, որոնք գումանի արօրի սայլի վերայ պէտք եղած տեղերն են զարնում։

Ակ կամ. ակն— գումանի կամ սայլի անիւ.

Ակովուկ— լուծն ու արօրը միմեանց վերայ կապող շղթայի երկաժէ կեռ.

Ամոլակոս— գումանի և արօրի ամոլ լնի ակօսան կողմը լընուած տոււար, ուր լծում են ամենից զօրաւորին:

Ամոլկորտ— ամոլ լնի կորտի կողմի տոււարը.

Ամոլվար— ամոլան լուծք եղող կամ վարող մշակը.

Առատամ— գումանի կամ արօրի այն տեղն է, որի վերայ անցնում է խոփը (գիւղացիք սորա համար պատմում են, թէ Աստուած պյս փայտը շինեց և Ադամին տալով ասաց. — առ Ադամ, սորանով վարէ, ցանէ և կեր. սորանից էլ առաջացած են համարում պյտ անունը):

Առաւել— գումանի մէկ ակօսը լրանալով՝ միս ակօս անցնելու շրջանը:

Առատապյ, արմատապյ— գումանի խարիզանի մէջտեղ հաստատուած պյն հաստ ցիցն է, որի վերայ ձգում են գումանի շղթայի օղակը:

Առմմտապյ— գումանի շղթայածայրի օղակ:

Բնատապյ— 1. կալուայ ցոռկը կապելու կամ գունչն անցնելու փայտէ օղակ. 2. գումանի շղթայ.

Գործք— հերկելի արտի մէջ առաջին անգամ 2 ակոս վարելով տոււած նշանը:

Էշ— ուղապարանցաձեւ ծուռ փայտ, որի ետեի ծայրի տակը հաստատուած է առատամը:

Թւէ.— վ. գումանի ոտնախպէր և առատամն (խոփի կողմից) իրար կապող փայտը.

Թուր.— վ. առատամն ու գումանի էշը գումանի խոփի մօ-

տից իրար կապող երկայն բառակուսի տաշուած
թրածե փայտ.

Խժառք. — Վ. լուծ բաշող տաւարի զզի այն մասը, որի վե-
րայ լուծ է դրում.

Խարիզան. — Վ. գերանաչափի փայտ է, որի մի ծայրը գու-
թանի սեռնի մէջտեղ է հաստատուած, միւս ծայ-
րն ամոլի լծի վերայ:

Խաւ կամ հաւ. — Վ. գութանի թրի վերին ծայրի ծակի մէջ
անցկացրած մատաչափ փայտն է՝ թուրը գուրս
չդալու համար:

Ծեռ. — Վ. գութանի խարազանի վերայ հաստատուած այն
ցիցն է, որից կապում են ճամբարակի մէկ ծայրը:

Ծռմաճ. — Վ. մաճի միւս կողմի ցիցը, որ կարևոր դէպքում
մաճկալը ձախ ձեռքով բռնում է:

Կանտրիկ (կանտրիւ) — Վ. արօրի ծայրը լծան վրայ կապող
փայտէ մեծ օղակն է:

Կաքաւ. — Վ. գութանի վերայ մէկ ցից է, որ առատամիու մաճի
ունախպէրը իրար վերայ մխուելով հաստատում է:

Կնկուղ. — Վ. գութանի իշոյ վերի ծայրի վերայ հաստատուած
մի ցից է, որին կապում են ճամբարակի մէկ ծայ-
րը. այսպիսով գութանի խարազան կոչուած փայ-
տըն և էշը կապում են իրար հետ:

Կնճակ. — Վ. լծակից աշխատող զսդ եզն ու լծան երկու
տաւարն իրարու կնճակ են:

Կունտ. — Վ. սալլի և գութանի անիւների գունդ, որի մէջ
շրջում է սեռնի ծայրը:

Զեկէ — Վ. 1. գութանի իշոյ տակից հաստատուած մեծ դանա-
կի ձեռով ձեկէ երկաթն է, որ խոփի վրայից ակոս է
ձեռում: 2 սոլկարի գործիք, որով սօլ են ձեռում:
Ճամբարակ. — Մշ. բարակ փոկերից հիւսուած բազկաչափ
հաստ կաշեկապ, որ միացնում է մէկ մէկու գու-
թանի էշն ու խարազանը:

Մալուխ. — Մշ. լուծն ու արօնն իրար կապող փոկի ծայրի
մէջ անցնելիք մտաի հասա. սրածայր փայտ է:

Մաճ. — Վ. այն ցիցն է, որ գութանի իշոյ ոտն ու ոտնախպէրը
վերի կողմից կապում է իրար:

Մանկեռ. — բազմամատնեայ փայտէ գործիք, որով ցանուած

արտը կամ ածուն կմանկոին սերմը հողի ներքեւ
ծածկուելու:

Միջնակ. — Վ. արտի երկու կողմը վարածների մէջ անվար
մնացած տեղը.

Մուսիկ. — Մշ. կորտի կողմից հոլոված գութանի անիւ:

Նեփ. — Վ. 1. մատնաչափ լայնութեամբ երկար կաշի, որ կա-
պում են խարազանի ծայրին տաւարներին զար-
կելիս աւելի ցաւ տալու համար. 2. գութանի
միջից շրջուած և երկայնաձիդ իրար կպած հո-
ղակոշտեր:

Ոժտուն. — Վ. գութանի երրորդ լուծն սարծել 1/8աւ ոժ-
տունվար. — Վ. ոժտուն լուծ վարող:

Հորոց. — Վ. չորս տաւարից լծած կէօ գութան:

Պարոր. — Վ. մանկեռ կամ տափ բաշող երկու ձողաչափ
փայտեր, որոց ծայրն ամրացած է լուծի վրայ:

Պէի. — Վ. լծան մէջ տեղ ցցած ցից զոյդ փայտեր, որ լծան
կապուած բաշան այս ու այն կողմ չխոտորի:

Պտեղ. — Վ. գութանի խարազանի վերին ծայրին ամրաց.
րած փոքր ցից, որին կոթենցնում է իւր ոտը
ամոլի լուծ վարող մշակը:

Սարծիլ. — Վ. գութանի երկրորդ լուծք, ամոլան առջեկ լուծք:

Արելիս. — Վ. խարազանն ու իր կոթը միմեանց վրայ կա-
պող կապը:

Ակլիի, **Աիցկե-** Վ. այն արօրը, որ Վանում բաշւում է մի
լծով, իսկ Մշում երկու:

Վրան. — Վ. երկու փայտերի միջնավայրը զարնուելիք փայտ
կքելու համար կամ սայլի և գութանի անհնե-
րը սեռնի վրայ հաստատելու փինչ (թալաշ):

Տափ. — Վ. տափան. ցանուած արտի հողակոշտերը փիսրե-
լու գործիք, որով սերմը հողի հետ է խառնում:

Տափեմ. — Վ. ցանուած երկիրը տափել:

Տէօլ. — Վ. գութանի կամ տայլի անուի երկաթէ շրջանակ:

Փամփալ. — Վ. 1 բահի կոթը ամրացնելու չըորդանի ձևով 4
մատնաչափ փայտ է, որ բահի ու կոթի մէջ տեղ են
սեղմում. 2. նոյնափասի բայց տափակաձև գործիքով
գութանի խարազանի ծայրը ամրացնաւմ են սեռնի մէջ: